

3740

286

Ապահովության „Հայոցեամասուն” ապահովի

ՖԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈԵՐԱՆՑՈ

ՄԻԶԱԶԴԱՅԻՆ ԼԵԶՈՒԻ

ԽԱՐԱՀԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Առաջնական Հ. Տ. Ա.

— • — • — • — • —



ԹԻՖԼԻՍ

լրան «Հայոցեամասուն», Ելիզաւետինսկայա Ն 17
1910

20 MAY 2010

453.555.1

2-48

ԲՈՅԱ Ա. Ը.

Խառակուրիւն „Էսպերանտո“ ապահով

ՖԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ս Պ Ե Ր Ա Ն Տ Օ


ՄԻԶԱԶԴԱՑԻՆ ԼԵԶՈՒԻ

Առաջին հ. Տ.Ա.

Թ Ի Ֆ Լ Ի Ռ

բան «Էսպերանտո», Ելիզավետինսկայա № 17

1910



0 AUG 2013

վիճակում համապատասխան է այս պահանջմանը:

a, b, c, d, e, f, g, h, i, j, k, l, m, n, o, p, r, s, t, u, v, w, y, z.

Гос. Библиотека
Армении

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՍՊԵՐԱՆՑՈ ԼԵԶՈՒՄ

ԱՅԲՈՒԻՔԵՆԸ

Aa Bb Cc Čč Dd Ee Ff Gg
Hh Ħħ Ii Jj Ĵġġ Kk Ll Mm
Nn Oo Pp Rr Ss Šš Tt Uu
Üü Vv Zz

Մի քանի տառեր ունեն առանձնաշատկութիւններ. 1. Ա տառը միշտ այնպէս է կարդացւում, ինչպէս ու հնչիւնը հայերէն Աստուած, հագուագիւտ բառերի մէջ: Նա աւելի շուտ ւ-ի արժէքն ունի: 2. Կթէ տաղարանում՝ ն, ն, ն, ն, ն, ն, տառերը չեն ճարւում, գործ են ածում ch. gh, hh, jh, sh և տառերը: 3. Լլ տառը կէս փափուկ է արտասանում: 4. Կթէ յ տառը գանւում է ձայնաւորից առաջ, այդ դէպքում ձայնաւորը փափկանում է. ja-հա, je-հ, jo-եօ, ju-իւ:

ՅՈՒ. — Անորոշ յօդ գոյութիւն չունի և կայ միայն որոշեալ լա յօդը, որ գործ է ածուում բոլոր սեռերի, հոլովերի և թռերի մէջ միակերպ. la patro հայրը, la patrino մայրը, la շտոնո քարը, la luno լոյրը: Հետևապէս դա մեր լուի արժէքն ունի: Աւմ համար ոք յօդի գործածութիւնը զժուար է, կարող է իսպառ գործ չածել, մինչեւ որ գործնական զբաղմունքը նրան կըսովորեցնէ:

ՄԱՍՈՒԹԻՅ ԲԱՆԻ. — Դոյական անունը միշտ վերջաւորւում է օ. օր. homo մարդ, besto գազան ևն.: Յոդնակի թիւր կազմելու համար օ վերջաւորութեանը աւելացնում ենք յ տառը: Հստ վերջաւորութեան կայ միայն երկու հոլով ուղղական եւ հայցական. վերջինս կազմուում է ուղղական հոլովի վերջաւորութեանը աւելացնելով ո տառը, օր. patro-n հօր (գրաբար զհայր): Մնացեալ հոլովերը կազմուում են նախդիրներով սեռականը ստանալու համար աւելացնում ենք de (-ի, նաև բացառականի -ից), տրականի՛ ալ (առ, դէպի), գործիականի՛ թր (-ոլ, միջոցով) և պատմականի՛ թր (մասին, սսերէն ուրախութ հոլովը):

Այսպիսով կը ստանա՞ք հետեւալը. Ուդ. la libro գիրքը.
Ս. de la „ գրքի
Տ. al la „ գրքին
Հ. la libron գիրքը (զգիր)
Գ. per la libro գրքովը

♀. pri la „ **զբքի մասին**
 ♂ոգնակի թիւը կը լինի՝
 ♂. la libroj **զբքերը**
 ♂. de la „ **զբքերի**
 ♂. al la „ **զբքերին**
 ♂. la librojn **զբքերը**
 ♀. per la libroj **զբքերով**
 ♀. pri la „ **զբքերի մասին:**
 ♂իշտ այսպէս են հոլովում բոլոր
 գոյական անունները՝ շնչաւորը թէ ան-
 շունչը, տեսանելին թէ վերացականը, իսկ
 մնացած նախդիրները դրուելով բառի ըս-
 կզբնական ձևի առջելից ստացւում են
 զանազան հոլովներ կամ թէ, աւելի լաւ
 սահծ, առանձին ձևեր. օր. por patro-
 հօր համար, kun boyo—եղան հետ, en
 domo—տան մէջ, են.:

Ածական անունը միշտ վերջաւոր-
 ում է ա. օր. varma տաք, sekä չոր են,
 Ածականները հոլովում են գոյական ա-
 նունների պէս և միևնոյն ժամանակ հո-
 լովում են և այն դէպքում, երբ գտըն-

լում են գոյական անունների հետ. օր.
 bona amiko (բարի բարեկամ), որի հայ-
 ցականը կը լինի bonan amikon. յոգնա-
 կի թիւը՝ bonaj amikoj, bonajն ամիկոյն.
 Թուական անունները յատուկ վեր-
 ջաւորութիւն չունին. քանակական թուա-
 կան անունները չեն հոլովում:
 Unu—1, du—2, tri—3, kvar—4,
 kvin—5, ses—6, sep—7, ok—8, naš—9,
 dek—10, dudek—20, tridek—30, cent
 —100, mil—1000 են. թուերը կարդա-
 ցւում են այն կարգով, ինչպէս որ գը-
 րուում են. 12-dek du, 26-dudek ses.
 Դասական թուական անունը կազմում
 է ածականի և վերջաւորութեամբ. սուա
 սուաջին, ծաւ երկրորդ, են.: Բազմապա-
 տիթէ մասնիկն է -obl-, trioble երեք
 անգամ. կոտրակային մասնիկն է -op-,
 ծասո մէկ երկրորդ (կէս). Հաւաքական
 մասնիկն է -op-, ծարօ երկուամիք: Բա-
 ժմանարար մասնիկն է թօ բառը, որ գը-
 րուում է թուերի առջելից. թօ կվին հինգ-

հինգ, թու ցս երկ-երկու: Բացի այս կան
նաև գոյականի և մակրայի վերջաւորու-
թիւն ունեցող թուտական անուններ:

Դերանուններն են, անձնական՝ ու-
-ես, վի-դու, դուք, (օւ-դու անզործածա-
կան է), լի-նա, Տի-նէ (կանանց համար,
ուուսերէն օհա), Ու-նա (չեզոք սեփ, ուու-
սերէն օհօ), ու-մենք, իլ-նրանք, ոն ան-
դէմ դերանուն է և գործ է ածում յոգ-
նակի թուով. ոն դիրա ասում են, ոն կա-
լուսադում էն խաղում են, են: Ստացական դե-
բանունները ընդունում են ածականի և
վերջաւութիւնը. միա-մեր, վիա-ձեր, քո,
Տիա-նէրա, ուա-մեր, են: Դերանունները
հոլովում են գոյականների պէս. de mi,
al mi, miñ, per mi, pri mi.

Բայերը վերջաւութիւն է (անո-
րոշ դերբայ), skribi գրել, lerni սովորել:
Էստ թուերի և դէմքերի բայերի վերջա-
ւութիւնները չեն փոփոխում, այնպէս
որ դերանուններով են իմացւում թէ թիւը
և թէ դէմքը:

Ներկայ ժամանակը վերջաւութիւն է
-as. mi skribas ես գրում եմ,

vi „ գուգրում ես.

li (si) „ նա գրում է.

ni „ մենք գրում ենք.

vi „ գուգրում էք.

ili „ նրանք գրում են.

Անցիալ ժամանակը՝ -is.

mi skribis ես գրում էի, գրեցի-

vi, li (si), ni, vi, ili skribis գու գրում
էիր, նա գրում էր, մենք գրում էինք,

գուք գրում էիր, նրանք գրում էին կամ
թէ գրեցիր, գրեց, գրեցինք, գրեցիք,

գրեցին (ուրեմն) կատարեալ և անկատար):

Անցանի ժամանակը՝ -os.

mi skribos ես գրելու եմ, սի սու

vi, li (si), ni, vi, ili skribos գու գրելու

ես, նա գրելու է, մենք գրելու ենք, գուք
գրելու էք, նրանք գրելու են, նաև կը

գրեմ, կը գրես, կը գրէ, են.

Պայմանական եղանակը՝ -us.

mi skribus թէ որ գրէի.

vi, li (si), ni, ili skribius **թէ** **որ** **գրէիր**,
թէ **որ** **գրէր**, **թէ** **որ** **գրէինք**, **են**.

Դերբայները կազմուում են վերջաւու-
 րութեան ա, i, o լծորդներով. գրանք **լի-**
 նում են ներգործական և կրաւորական:

Ներգործական. — **Ներկան** վերջաւու-
 րում է -anta, **օր.** skribanta գրող (**որ**
 գրում է). **անցեալլ'** -inta, **օր.** skribinta
 գրած (**որ** գրել է). **ապանին՝** -onta,
 skribonta գրելու (**որ** գրելու է):

Կրաւորական. — **Ներկան՝** -ata, skribaba-
 ta գրուող (**որ** գրում է), **անցեալլ՝** -ita,
 skribita գրուած (**որ** գրուել է). **ապանին՝**
 -ota, skribota գրուելու (**որ** գրուելու է)

Դերբայները յաճախ գործ են ածուում
 նաև մակրայօրէն, **օր.** skribante գրելով.
 skribinte գրած լինելով:

Կրաւորական սեռի բոլոր ձեռքը կազմ-
 ուում են esti օժանդակ բայի օգնութեամբ,
որ ի հարկէ գրուում է բայի կրաւորական
 ձեռի հետ. **օր.** la letero estas skribita
 de mi նամակը գրուած է ինձնով (նա-

մակը ևս եմ գրել—հայերէն այսպէս ենք
 թարգմանում:)

Մակրաւերը վերջաւորուում են—e: ofte
 յաճախ. mi' kantas ofte ես երգում եմ
 յաճախ: Բաղդատական աստիճանը նման
 է ածականին և «քան» բառը թարգման-
 ուում է ol. **օր.** via patro pli bone skri-
 bas ol mi ձեր (քո) հայրը աւելի լաւ է
 գրում քան ես:

Նախողիներն առանձին վերջաւորու-
 թիւններ չունեն: Նախողիները միշտ ուղ-
 ղական հոլովի հետ են դրում (պահան-
 ջում են ուղղական հոլով և երբ ցոյց են
 տալիս ուղղութիւնը (դէպի ուր հարցին
 իրեւ պատասխան) գործ են ածուում և
 հայցականի հետ: Բացառութիւն են կազ-
 մում ալ դէպի և ցիս մինչև նախողիները:

Ընդհանուր կանոնները

ա) Ամեն մի բառ կարգացւում է այն-
 պէս, ինչպէս որ գրուած է. **օր.** mi ne
 havas tempon մի նէ հաւաս տէմպօն:

բ) Շեշտը միշտ գտնուում է նախավեր-

զին վանկի վրայ. օր. ami, flino, aparteni.

գ) Բարդ բառերը կազմւում են պարզ միաւորւթեամբ, միայն նորուսների համար և բառարաններում յաճախ գրանք իրարից բաժանուում են գծիկով և կամ ապաթարցով, օր. fero երկաթ, ոյօ ճանապարհ, որից երկաթուղի կը լինի fer- ոյօ կամ Քer' ոյօ։ Այստեղից երեսում է, որ բառերը բաժանուած են և բաժանուած նաև ընդհանուր վերջաւորութիւնը,

դ) Երբ մի այլ բացասական բառ է ընկնում նախադասութեան մէջ ու բացասականը, որ ոչ է նշանակում, այլև չի գրում. օր. mi nenieam vidis ես ոչինչ չը տեսայ, կամ ինչպէս հայերէն էլ առում ենք «ես ոչինչ տեսայ»։

ե) «Դէպի ռւր» հարցին պատասխանը լինում է հայցական հոլովով. օր. tie այստեղ, tien դէպի այստեղ. Tiffison դէպի Թիֆլիս։

զ) Ամեն մի նախդիր որոշ նշանակութիւն ունի, բայց եթէ հարկաւոր է զործ ածել որևէ նախդիր և նախադասութեան մաքից չի հասկացուում թէ որը, այդ դէպում զործ է ածում յէ, որը առան-

ձին նշանակութիւն չունի. օր. ridi je тio ծիծաղել նրա վրայ, ցոյի յе тio ուրախանալ այն բանի վրայ։ Փոխանակ յе նախդիրի կարելի է զործ ածել նաև հայցական հոլովով։

է) Այն բոլոր օտար բառերը, որոնք բոլոր լեզուների մէջ մանելու քաղաքացիութիւն են ստացել, էսպերանտո լեզուի մէջ ևս զործ են ածում, միայն ենթարկում են նրա կանոններին, այսպէս օր. kulturo, teatro.

ը) Թէ զոյականի և թէ յօդի վերջաւորութիւնները կարող են կրճատուել և փոխարինուել ապաթարցով. օր. de l' mondo փոխանակ de la mondo, dom'= domo և այլն։

Միջածանցներ եւ նախածանցներ
—ա՛—ցոյց է տալիս անարդանք և ստորացում. homej մարդիկ, homaēoj մարդուկներ։

ա՛—տեսողութիւն, բազմանգամութիւն.
pafidi զէնք պարպել, pafadi զինակոծել:
—այ— որեւէ նիւթից գոյացած, որոշ յատկութեամբ. հաfo ոչխար, հաfajo ոչխարի միս.

—an—[‘] անդամ, բնակիչ, մի բանի հետևող. urbo քաղաք, urbano քաղաքացի, Kristo Քրիստոս, kristano քրիստոնեայ: —ar—[‘] միատեսակ առարկաների համախմբում. arbo ծառ, arbaro անտառ: bo—[‘] ամուսնութեամբ ձեռք բերած բարեկամութիւն. patro հայր, bopatro աներ, սկսայր: —ej—[‘] փաղաքշական կրծատում. Petro Պետրոս, Pečjo Պէտօ, Alējo Ալեքսանդր: dis—[‘] ցրումն, մաս-մաս լինելլ. որի գնալ, disiri ցրուիլ: —ebi—[‘] կարելիութիւն (կարելի լինելը) fleski ձկել, fleskebla ձկուն: —ec—[‘] յատկութիւն կամ դրութիւն (վերացական) blinda կոյր, blindeco կուրութիւն: —eg—[‘] մեծացում և ուժեղացում. parafilo հրացան, paraflego թնդանօթ: —ej—[‘] տեղ, որ նշանակուած է մի բանի համար. pregi ազօթել, pregejo եկեղեցի: —ek—[‘] գործի սկիզբ՝ ակընթարթը. memori յիշել, ekmemori յանկարծ յիշել: —em—[‘] ենթարկումն, սովորութիւն

ունենալլ. babili շատախօսել, babilema շատախօս: —er—[‘] միակութիւն, մի հատ. šablo աւազ, sablero աւազի հատիկ: —estr—[‘] վարիչ, կառավարիչ. ſipo նաւ, ſipeſtro նաւապետ: —et—[‘] առարկայի փոքրացումը, առտիճանի թուլացումը. lago լիճ, lageto լճակ: —ge—[‘] երկսեռ. patro հայր, gepatroj ծնողներ: —id—[‘] զաւակ, սերունդ. bovo եղն, bovidō հորթ: —ig—[‘] ստիպել մի բան անել, մի բան դարձնել. varma տաք, varmigi տաքացնել: —ig—[‘] մի բան դառնալ. naski ծնել naskigj ծնուել: —il—[‘] կոմբինատիվ. kombi սանրել, kombilo սանր: —in—[‘] իդական սեռ. patro հայր, patrino մայր: —ind—[‘] արժանիք. ami սիրել, aminda սիրաժանի: —ing—[‘] առարկայ, որի մէջ մի բան կարելի է դնել. kandelo մոմ, kandelingo աշտանակ:

ism+՝ (միջազգային գործածութեան համաձայն). patrioto հայրենասէր, patriotismo հայրենասիրութիւն:

—ist՝ մարդ, որ պարապում է որևէ բանով, եօտ կօշիկ, botisto կօշկակար:

mal՝ անպայման հակադրութիւն, bona բարի, malbona չար, sekâ չոր, malseka թաց:

—nj՝ իգական փաղաքշական մասնիկ, Mario Մարիամ, Manjo Մանեա:

re՝ կրկին, յետ, doni տալ, redoni վերադարձնել:

—uj՝ 1) առարկայ, որի մէջ մի ըան է պահուած, mono գրամ, monujo քսակ.

2) բոյս որ պառուղ է բերում, romo խընդուրութիւն, 3) երկիր որևէ ազգի, armeno հայ, Armenijo Հայաստան:

ul՝ մարդ որևէ յատկութեամբ, bela գեղեցիկ, belulo գեղեցկադէմ մարդ:

—um՝ գործ է ածւում, երը մի բառ կազմելիս ոչ մի միջածանց յարմար չի գաւլիս, oř. կոլո վիզ, kolumo օձիք, nazo բիթ, nazumo ակնոց-պենսնէ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0240710



„ԿԱՎԵՐՈՒԵՆԻ ԷԽԳԵՐԵՆՑԻՑ”

Երկարաթաթերթ, Էսպերանտո, սուս, հայ և
վրացի լեզուներով, 1911 թ. տարեկան 1 ր. 50
կոսէկլ:

Կարելի է ստանալ ամեն անսակ դասադրքել
էսպերանտո լեզուի

Հասցեն՝ Թիֆլիս, Տաղարան „ԷԽԱՎԵՐԵՆՑԻՑ“ Հայ
Տէր-Աստուածատրեանցին:

Թիֆլիսում „ԷԽԱՎԵՐԵՆՏՈ“ լեզուն կարելի է
սովորել „ԷԽԱՎԵՐԵՆՏԻՍՏՆԵՐԻ ԽՈՒՕՏԱԿԱՆ ԼԻԳՈՎԻԻ“
բաժանմունքում, որ գտնուածէ Միքայէլեան փող
N 38, Թանգոյիեան եկեղեցու Շխական զպըց
շինութեան մէջ: Դասաւութիւնը լինում է կր
թուկի օրերով:

Սոյն զիրքը 50 օր. արժէ
օր. 1 ր. 50 կ., իսկ 100-ից
30%:

499.4
Բ-4